ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԿԱՐՄԻՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012-2015ԹԹ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար Ղ. Ղամբարյան

Քննարկվել է համայնքի ավագանու նիստում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
4. Համայքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները

Հավելված-1 Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը
Հավելված-2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը

ԻՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ , ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կարմրաշեն գյուղը վերաբնակեցվել է 1918թ-ից: Գյուղը ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն է գյուղի մոտակայքում գտնվող բազմաթիվ խաչքարերը: Գյուղը գտնվում է ծովի մակ.-ից 2036մ բարձրության վրա: Կան բազմաթիվ աղբյուրներ, որոնց միջոցով ապահովված է գյուղի և հարևան գյուղերի ջրամատակարարումը:

Գյուղի կլիման ցրտաշունչ է, ամռանը զով: Հաճախակի են չորային, երաշտի տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին:

ԺՈՂՏՎՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 312 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 55%-ը: Բնակչության սոցիաական կազմը հետևյալն է.

1. Երեխաներ /0-6/տ	24
2. Դպրոցական /7-17տ/	27
3. 18-62 տարեկան	185
4. Թոշակառուներ	68
5. Հաշմանդամներ	8
6. Աշխատունակներ	222

Գյուղն ունի 115 ծուխ, որոնցից 80-ն ընդգրկված են «Փարոսի» համակարգում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի /գյուղապետի/ կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

- աշխատակազմի քարտուղար 1 դրույք
- գլխ.հաշվապահ-ֆինանսիստ 1 դրույք
- **մասնագետ** 1 դրույք

- առաջատար մասնագետ 1 դրույք
- հավաքարար 1 դրույք

Համայնքի ենթակառուցվածքներն են.

Մշակույթի տուն

- տնօրեն 1 դրույք
- հավաքարար 1 դրույք

Գրադարան

- գրադարանավար 1 դրույք
- հավաքարար

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած 8 հոգուց: Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ Կառավարության 14.03.1997թ. N 51 որոշմամբ հետևյալ կազմով /տես հավելված 2/

- մշակույթի տուն
- գրադարան
- բուժկետ
- զբոսայգի
- վարչական շենք 1
- ջրմուղի ցանց 2
- ոռոգման ցանց 1
- գազի ցանց 0
- գյուղտեխնիկա և գործիքներ

Տնտեսական անկման հետևանքով, համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացավ: Պահեստամասեր և քսայուղեր չլինելու հետևանքով անմխիթար վիճակում են գյուղի տեխնիկական գործիքները: Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1965թ. որի մաշվածությունն այնքան մեծ է, որ ջրի կորուստը հասնում է 50%-ի: Անձրևաջրերը ու կեղտաջրերը

հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը:

Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: Ներկայումս սնհրաժեշտ է վերանորոգել 11 կմ ճանապարհ և փողոցներ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով մոտ 80 %-ով:
Չկան խողովակներ ու կիսախողովակներ խմելու ջրի և ոռոգման ներքին ցանցերի վերանորոգման համար: Խմելու ջրի մատակարարումը հաճախ կատարվում է ընդհատումներով՝ ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 65 առանձնատուն, 585 հազ քմ տարածքով: Կան բազմաթիվ կիսավթարային շենքեր, որոնք ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով չեն վերանորոգվում:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

• Համայնքի վարչական տարածքը	3221 հա, որից
• վարելահողեր	646.97 հա
• խոտհարք	127.55 հա
• արոտավայրեր	2793.50 հա
• անօգտագործելի հողեր	178.0 հա
• դաշտային ճանապարհներ	18.780 հա
• արտադրական մաս /կովանոց/	1.96 հա
• ավազի հանք	10 հա
• գերեզմանոց	0.28 հա
• տնամերձ հողեր	39.75 հա
• դպրոց	0.57 հա
• գյուղամիջյան փողոցներ	5 հա
• սեփականաշնորհված հողեր	594.42 հա, որտեղ
• մեկ հողաբաժնի չափը	4 հա
• համայնքի սեփականություն	310973 հա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման ջուր չունենալու պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ.մթերքների արտադրությունը: Հիմնականում զբաղվում է ցորենի, գարու, առվույտի, կարտոֆիլի, կաղամբի և այլ բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ: Այս արտադրությունը կախված է բնության քմահաճույքից: Անձրևային տարիներին որոշ չափով դեռ կարելի է բերք հավաքել, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 80 %-ը:

Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում: Ձմռան տևողությունը 6 ամիս է, որի պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի 1 միջնակարգ դպրոց, վերջին տարիներին վերանորոգված, բարվոք վիճակում, ուս.տարում 37 աշակերտ: Դպրոցն ունի 13 աշխատատեղ, մեկ ուսուցչին ընկնում է 3 աշակերտ:

ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն չունի մշակույթի տուն: Գործող գրադարանն ունի 3700 անուն գիրք, շենքը գտնվում է ոչ բարվոք վիճակում:

Սպորտ հրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զբաղված է ստորուգիին խաղերով: Ֆուտբոլային խաղերը կազմակերպվում են դպրոցի մարզահրապարակում, որը միշտ զբաղեցնում են դպրոցականները:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ բուժ.կետ, որը գտնվում է բարվոք վիճակում: Շենքը կառուցվել է 42 տարի առաջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքն ունի ավելի քան 10-ԲՈՀ-ի շրջանավարտ, տարբեր մասնագիտությունների, որոնք կարողանում են կազմակերպել կրթության ու դաստիարակության, մշակութային, շինարարական աշխատանքներ:
- Գյուղից 1-2 կմ վերև կա հանքեր, որը կարելի է օգտագործել գյուղի համար:

- **1941-45թթ Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան-կոթող, բազմաթիվ խաչքարեր, որոնց շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջությունը գյուղում:**

ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ճանապարհների, խմելու ջրի և ոռոգման ցանցերի մի մասի անմխիթար վիճակը
- Ծնելիության նվազում կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ
- Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը
- Գործազրկություն
- Հողերի անջրդիության պատճառով գյուղացու եկամուտների նվազում

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն
- Ուղղակի ընտրություններով համայնքի ղեկավարի ընտրության հնարավորություն

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման անհրաժեշտությունը /կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների աղբյուր/:
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

<u>Ռազմավարությունը</u>

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հոտևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը: Բարեփոխումներ կատարելով, նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

- Համայնքի գազիֆիկացում
- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում
- Համայնք ապահովել շուրջօրյա խմելու ջրով, ինչպես նաև ապահովել բնակչությունը ոռոգման ջրով:
- Կառուցել գյուղական ակումբ
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին
- Հիմնական վերանորոգման ենթարկել մայրուղուց Կարմրաշեն ճանապարհատվածը

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

ԳԱԶԻՖԻԿԱՑՈՒՄ

Գյուղի բնակելի տարածքով անցնում է գազի երկու գծեր, Երևան-Գորիս և Իրան-Հայաստան, սակայն գյուղը դեռևս գազիֆիկացված չէ:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիների տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով շարքից դուրս են եկել մոտ 45 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վերանորոգման ենթակա ջրագծերն անցնում են լեռնային տարածքով, որտեղ անձրևաջրերից ու գարնան ձնհալից առաջանում են սելավներ և մեծ վնաս են հասցնում խողովակաշարին: Սելավների պատճառով խողովակները ջարդվում են ու փչանում: Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ջրագծի հիմնական վերանորոգումը և նորի կառուցումը 6.5կմ վրա: Ընդառաջելով բնակչության դիմումներին, սույն ծրագրով առաջարկվում է հիմնական վերանորոգման ենթակա համայնքի ջրամատակարարման ցանցը և նոր ոռոգման ցանցի 6.5 կմ կառուցումը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

<u>Ծրագրի հիմնական նպատակներն են.</u>

- համայնքի գազիֆիկացում

- ապահովել համայնքը խմելու և ոռոգման ջրով
- նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները
- երաշտի տարիներին բանջարա-բոստանային կուլտուրաները փրկել երաշտից

<u>Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ</u>

- կնքել պայմանագիր Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայն ծրագրով պահանջվող գումարի 90 % -ը կհատկացվի հիմնադրամի կողմից, իսկ 10%-ը համայնքային բյուջեից և համայնքի ներդրումներից
- կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շին.կազմակերպությունները
- ձեռքբերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ
- կազմել ՇԻԳ համայնքի անդամներից կատարվող աշխատանքները վերահսկելու համար:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, համայնքը 100%-ով կապահովվի շուրջօրյա խմելու ջրով, կնվազի խմելու ջրի կորուստները, ներկայումս %-ից հասնելով % -ի:

ԿԿգազիֆիկացվի գյուղը, գյուղը կապահովվի խմելու և ոռոգման ջրով, որի արդյունքում կբարելավվի ազգաբնակչության սոցիալ-կենցաղային վիճակը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական մտավոր հաշվարկներով 6.5 կմ երկարությամբ ջրագծի կառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 100 մլն դրամ:

Գազիֆիկացման համար 150, միայն խմելու ջրագծի վրանորոգման համար 40 մլն դրամ, ընդամենը՝ 290 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈՀՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ 3կմ

Ներածություն

Համայնքի ոռոգման ցանցը գտնվում է գյուղից 2.5 կմ վերև: Կառուցվել է 1977թ., որը չի բավարարում նույնիսկ կարտոֆիլով և բանջար-բոստանային կուլտուրաներով զբաղված հողերը ոռոգելու համար և չի բավարարում բնակչության մի մասին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են.

- բարձրացնել գյուղ.նշանակության հողերի բերքատվությունը, ավելացնել գյուղ.մթերքների արտադրությունը, մասնավորապես կարտոֆիլի և բանջար-բոստանային կուլտուրաների:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիր-ներ

- հիմնախնդիր բարձրացնել ՀՀ Կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար
- ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը
- կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- 2009թ. իրականացնել ծրագրով նախատեսված շինարարական աշխա-տանքները
- ոռոգման ջրագիծը հանձնել շահագործման

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Իրականացնելով այս ծրագիրը, համայնքի 15 հա տնամերձերը կապահովվեն ոռոգման ջրով
- կավելանա գյուղ.մթերքների արտադրությունը

ԾՐԱԳԻՐ 3

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ, ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՎ ԲՈՒԺ. ԿԵՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի գրադարանը ունի 42 տարվա պատմություն, վերանորոգման չի ենթարկվել: Համայնքի առաջնահերթ խնդիրներից է վերանորոգել գրադարանը: Կառուցել գյուղական ակումբ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակներն են.

Գյուղական ակումբի կառուցումից հետո

- աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը,
- մշակույթի տան դահլիճը տրամադրել հարսանյաց արարողությունների, ավագանու նիստերի, համայնքի ընդհանուր ժողովների անցկացման համար,
- տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկույթներ,
- տրամադրել խաղասենյակներ շախմատի, նարդու և այլ խաղերի համար,
- բուժկետում կազմակերպել բնակչության առաջին բուժ.օգնությունը:

Ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- ծեռքբերել ՀՄՆՀ-ի համաձայնությունը՝ պահանջվող գումարը հատկացնելու համար,
- կազմակերպել բարերարների կամ համայնքի կողմից ներդրումների հարցը,
- վերանորոգել գյուղապետարանի, գրադարանի և բուժկետի շենքը /տանիք, ներքին հարդարման, ջրամատակարարման ու ջրահեռացման աշխատանքներ/,

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- բնակչության ազատ ժամանակն ավելի հետաքրքիր ու արդյունավետ անցկացնել,
- ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար:

ԾՐԱԳԻՐ 4

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ներածություն

Ներհամայնքային փողոցների ու ճանապարհների երկարությունը կազմում է 4 կմ-ից ավելի, որից՝ 1000մ-ը կենտրոնական ճանապարհն է: Մայրուղուց մինչև գյուղ մտնող ճանապարհը քանդված վիճակում է, սույն ծրագրով առաջարկվում է ասֆալտապատել կենտրոնական ճանապարհը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է.

- ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին,
- վերացնել փողոցների ջրափոսերը:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Վայոց ձոր մազրի Կարմարաշենի համայնքում այն ունի հետևյալ պատկերը

	Եկամուտի տեսակը	2006-թ փաստացի	2007թ. նախատեսված	2008թ կանխատեսում
	Եկամուտներ ընդամենը	3004.0	464.0	6352.0
Ա	Հարկային եկամուտներ	929.0	1543.0	3571.0
1	Հողի հարկ	797.0	1442.0	3368.0
2	Գույքահարկ	132.0	101.0	2030.0
3	Եկամտահարկ	-	-	-
4	Այլ.հարկային եկամուտներ	-	-	-
Բ	Տուրքեր	22	7.0	10.0
1	Պետական տուրքեր		-	-
2	Տեղական տուրքեր	22.0	7	10.0
Գ	Ոչ հարկային եկամուտներ	80.0	92.0	488.0
1	Պետ. պահուստ. հողերի վարձավճար	80.0	92.0	488.0
2	Գույքի վարձավճար	-	-	-
3	Տեղական վճարներ	-	-	-
4	Այլ ոչ հւսրկ. եկամուտներ	-	-	-
Դ	Պայշտոնական տրանսֆերտներ, դոտացիա	1500.0	1023.0	1833.0
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնությունից	111.0	1500.0	-
Զ	ազատ մնացորդ	384.0 81.0	430.0 5.0	450.0

5 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

	Ցուցանիշներ	Չափի միավոր	2009թ. փաստ	2010թ. փաստ	2011թ փաստ	2012 կանխ.
1.	Համայնքի տարածքը	հա	39.75	3975	3975	3975
2.	Բնակչության թիվը	մարդ	320	325	333	312
3.	Ծնունդը	մարդ	6	9	12	15
4.	Մահացությունը	մարդ	3	4	4	15
5.	Աշխ.ռեսուրս.,այդ թվում	մարդ	222	230	238	250
6.	ա/ զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի	մարդ				
7.	Գործազրկության մակարդակը	%	4	4	3	2
8.	Առևտրի և սննդի օբ. թիվը	հատ	1	1	1	1
9.	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	6	6	6	6
10.	Ներհամայնքային ոռոգման ոռոգման ցանցի երկարությունը	կմ	-			
11.	Ոռոգման ընկած հողերը	կմ	12	13	16	20
12.	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	37	40	41	43
13.	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	6	6	6	6

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը 115 *այդ թվում*

ա/ անհատական տնտեսություն 125

բ/ կոլեկտիվ տնեսություն -

գ/ պետական տնտեսություն -

2. Գյուղ.արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը

ա/ ցորեն 3300 ցենտներ
բ/ գարի 550 ցենտներ
գ/ կարտոֆիլ 250 ցենտներ
դ/ կաղամբ
ե/ բանջարաբոստանային կուլտ. 300 ցենտներ
զ/ կաթ 16000 ցենտներ
ք/ միս 6000 ցենտներ
ը/ բուրդ 600 ցենտներ
է/ ձու 30000հատ
ժ/ մեղր 15000

3. Ցանքատարածություններ

ա/ հացահատիկ 186.5 հա
բ/ կարտոֆիլ 5հա
գ/ բանջարբոստ.կուլտ. 12հա
դ/ կաղամբ 200հա

ե/ առվույտ	15հա
զ/ կորնգան	
է/ միամյա խոտեր	
4 Անասնագլխաքանակը հատ	
ա/ խ/եանասուններ	260գլուխ
այդ թվում՝ կովեր	160գլուխ
բ/ մ/ե անասուններ	800գլուխ
այդ թվում՝ մայրեր	600գլուխ
գ/ խոզեր	5գլուխ
այդ թվում՝ մայրեր	3գլուխ
դ/ թռչուններ	420 թև
այդ թվում՝ հավեր	380 թև
ե/ մեղվաընտանիքներ	150
5/ Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը, հատ	
այդ թվում՝ թրթուրավոր տրակտոր	1
անիվավոր տրակտոր	10
բեռն.ավտո.տարբեր մակնիշի	5
տրակտորային կցասայլեր	10
գութաններ	4
կուլտիվատորներ	1
խոտ հավաքող մեքենաներ	3

Հավելված 2

ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1 Գյուղապետարանի շենք	1
2. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ	4.5
3. Ներտնտեսային ոռոգման ջրի համակարգ	3.0
4. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ	4
5. Ներհամայնքային կամուրջներ	3
6. Գերեզմանատուն	1

Հավելված 1

ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ